8. ՔԵՌԻՆ ՈՒ ԽՈՒԱՐԶՈՆ

Ժամանակին մեկ մարդ կէղնի։ Ինք ոընչբար կէղնի։ Ինք, ուր կնիկն են, բայց ուր կնիկ շատ սիրուղութին կէնա ռեսի տղի հետ։ Ադ մարդ ինչ խըդար օր ցորեն կտանի կէրթա կաղա, ջաղչըպներուն շատ լավա կընկնի, թե իմ ալուր մանդր աղցեք։

Ջաղչըպներ ըգրրա ալուր շատ մանդր կաղան։ Կրերա տուն, հաց կողա։ Կնիկ ինչ օր ալրի մանդրերն ա, կէնա ռեսի տղին գաթա, ինչ օր էն բեդ ալրներեն ա, կէփա ուր իրկան հաց։

Մարդն կնկան կասա.—Իդա ալուր ես շատ մանդր կաղամ ու իգա հաց հ՚որի՞ հըմալ բեդ ա։

Կնիկ կպատասխանա մարդուն.—Դու չըս դինաս, հ՚որի՞ հըմալ բեդ ա։

Մարդ կըսե.—Չէ՛։

Կնիկ կասա.—Քու քուր օր տարուկ ա Բաղդադ, ընտեխեն կթըռա, զմանդր կտանի, բեդ կթորկա։

Ադ մարդն ա կհերսոտի ու կհերսոտի։

Կէլնի մեկ օր զլուծք կհարցըկա, կառնի փետ մը ձեռ ու կէրթա։ Ջորս-հինգ օր ճամբախ կէրթա, մեկ օր կէլնի Բաղդադու քաղաք կինկնա։ Ադ քաղքի մեջ կհարցու ու կփորձու, շատ չէրկընցունք, ուր քուրոջ տուն կգտնա։ Կիտա փետին ու կհասնի քուրոջ։

Քուր կըսե թե.—Ախպե՛ր, աստված խերն էնի, ադ ի՞նչ դավի ա, կեցի խոսանք տեսնանք։

Քուրսին կդրա, ախպեր կնստի, կբարովա, զախպեր, կըսե.—

Ախպե՛ր, ասա տեսնանք ի՞նչ խրզմրթ ես էկեր իս, ի՞նչ տապով՝ իմ վրեն կհերսոտիս։

Կրսե.—Ես չհերսոտիմ, ապա վո՞վ հերսոտի։ Ի՞նչ խրդար կշալկիմ ցորեն, տանիմ կէրթամ ջաղաց կաղամ, ջաղչպներուն լավա կընկիմ օր մանդր աղան, կրերիմ իդամ տուն, դու էդ տեխեն կթրռիս, ղմանդր կտանիս, բեդ կթորկիս, ապա ես չհերսոտիմ, վո՞վ հերսոտի։

Էլավ ուր քուրոջ տղեն ասեց.—Քեռի՛, ադ քու կնիկ քըզի խաբեր ա։ Ես կիդամ քու մոտ հոտաղ կեղնիմ, հախ քենե չըմ ուղիմ, եփ օր քու կնիկ լալկավ չկարցավ զրուցեց, անգահ նոր իմ հախ տուր։

Էլավ առավ զուր Խուարզոն ու էկավ։ Էկավ ճամբու կես, նստան հ՝աղբրի վրեն, ջուր խմեցին։

Ըսեց.—Քեռի՛, ես կիդամ քու մոտ հոտաղ, բայց ընծի մեկ խասիաթ կա, կընդունի՞ս, յան՝ չէ։

Կասա.—Լաո՛, ի՞նչ խասիաթ ա։

Կասա.—Կեսավուր օր մոտեցավ, ընձիկ կնեդ մի կա, դուլուծք կկանգցուցիս, հընչի ես դամ։ Ան ժամանակ կէլնինք կքշինք։

Ադ մժուլին քեռուն էնեց ու էլան հասան ի տուն, հ՝իրկուն էր, էդ էրկուս հաց կերան։

Քեռին ըսեց թե.—Խուարզո՛, էլի էրթանք մըզի հ՝օդեն քնինք։

Ըսեց.—Դե՛, քըլի էրթանք։

Քեռին օր էլավ, դուս գնաց, Խուարզոն մտավ փեթկի տակ, պատվըտավ, տեսավ օր ռեսի տղեն էկավ։

Կնիկ ռեսի տղին ըսեց.—Ապա, ռեսի՛ տղա, մենք ի՞նչ էնինք։ Խուարզոն էկեր ա, էլ ես չըմ կէնամ քեզի տան մեջ կերակուր էփիմ, կերցում։

— Հապա իմա՞լ կէնիս։

— Քըզիկ, կէփիմ, հ՝արտ կրերիմ իդամ։

— Օր հ՝ըմալ ա,—ըսեց ռեսի տղեն,—լուսուն հ՝արոր կթալիմ ճամփի հետ, կզաղիմ, էրթամ մըր արտ, կեսօրին օր թե հաց բերեցիր էկար, կառնիս զաղի հետ, կիդաս մըր արտ։

Խուարզոն ադ բաներ հ՝մեն իմացավ։ Էլավ գնաց քնավ ու լուսուն էլան ինք ու քեռին լծեցին լուծք ու գացին։ Գացին ի արտ, ցան մ՝էրկուս լծեցին քշեցին մինչև կեսօրին մոտեցավ։

Խուարզոն քեռուն ասեց.—Հո՛, հո՛։ Կանդրցու, իմ կնեդ էկավ։ Ես կէրթամ կնեդիմ։ Խուարզոն էլավ վազկավ, գնաց գեղի հ՝առեջ

ջրմբրդեց զէդ զաղ, հ՚ընչի գնաց ռեսի աղի արտ։ Էկավ մեկ լէ գեղի հ՚առեջ, ղազեց, էկավ ուրենց արտ ու էլավ նստավ հոտաղ, ասեց.—Քեռի՛, էլի, էլ մոզ-կնեդ չրկա։

Դառնանք կնկան էնած բանին։ Կնիկ բերեր ա ապուր, էփեր ա քեռուն ու խուարզին, գաթա ու հալվա, թալեր ա ռեսի տղին, օր առնե էրթա ռեսի տղի արտ։ Գաթեն իտա ռեսի տղին, ապուր տանի քեռուն, խուարզուն։

Կէլնի կնիկ, կառնի զաղ ու կէրթա։ Կինկնա զաղի հետ ու կիգա ուրանց հ՚արտ, կիգա օր մոտենա ուրանց հ՚արտին, կճանչնա օր թե ուրանց լուծքն ա, կուղե օր եգ դառնա։

Խուարզոն կկանչա.—Քեռընկի՛, արի՛, արի՛։

Ճարահատ մնալով, կիգա։ Խուարզեն ջալկի բերան օր կբանա։

— Տե՛ս, քըզիկ գաթա, տե՛ս, քըզիկ հալվա։

Մարդ կասա.—Կնի՛կ, ասօր ադ ի՞նչ իս էներ իս։

— Ապա խուարզոն էկեր ա, էն հ՚ապով իմ բերեր իմ։

Կերան ուրանց հաց, կնիկ դարձավ, էկավ տուն, ուրանք էլան լծեցին ուրանց լուծք քշեցին։ Հ՚իրիկուն էկան, քեռին ու խուարզոն գացին տուն, տավար կապեցին, էկան նստան հաց կերան։ Քեռին.—Խուարզո՛,—ըսեց,—էլի՛, էրթանք քընինք մըզի։

Խուարզոն ըսեց.—Դե՛, էլի, էրթանք։

Օր հ՚էլան գացին փողան, էմլէ խուարզոն մտավ փեթկի տակ ու պատվըտավ։

Տեսավ օր ռեսի տղեն էկավ։ Ռեսի տղեն կնկան ասեց թե.—Չէ՞ դու ինծի խաբեցիր, բան չբերիր։

Կնիկ ըսեց.—Հա՛, օ՛, քզիկ էփեցի գաթա ու հալվա ու ընկա զաղի հետ գացի, դեմ գացի էլա մըր արտ։ Կարած պատանք օր զիս տեսավ, զիս ի խանչեց տարավ։ Ապա լուսուն քզիկ կէփիմ ծվածեղ, ձեր արտի ճամբաս ընձիկ ցուցու, օր բերիմ իդամ։

Ըսեց.—Լուսո՛ւն օր տնեն հ՚էլա, ցորեն կթափիմ ճամբի հետ մինչև իգա մըր արտը։ Լուսուն, կեսօր օր էղավ, կառնես ցորենի ըռեջք, կիգաս մըր արտը։

Ռեսի տղեն էմալ պատմեց ու գնաց։ Խուարզոն զադ բաներ իմացավ ու էլավ գնաց դեն, քնավ։ Լուսուն քեռին ու խուարզոն լծեցին լուծք ու գացին, գացին ուրենց արտ, մինչև կեսօրին քշեցին։

Խուարզոն ըսեց.—Կանի՛, իմ կնեդ էկավ։

Կէլնի խուարզոն կվազկի կիգա գեղի հ՚առջև։ Ռեսի տղի թա—

փուկ ցորեն, Խուարզոն կժողվա ու կրերա, կթափա արտի ճամբախ ու կիգա նստի հոտաղ ու կքշա։

Կեսօրին կնիկ առավ հաց, օր պըտի իգա, ընկավ ցորենի ըռեջքի հետ ու էկավ։ Էկավ մոտեցավ հ'արտին, ճանչցավ օր ուրանց լուծքն էր, ուզեց օր ետ դառներ, Խուարզոն կանչեց.—Քեռընկի՛, քեռընկի՛, արի՛, արի՛։

Քեռընկին մտքի մեշ խոսաց՝ «Խուարզո, քու պատանք կարիմ»։

Քեռին շալկի բերան բացեց, տեսավ օր ծվածեղ էներ է քելեխ։ Քեռին ասեց թե.—Կնի՛կ, իգա ի՞նչ իս էնիր իս էսօր։

— Ապա ես ի՞նչ էնիմ։ Ես քեռուն ու Խուարզան չէնիմ, ապա վի՞ր էնիմ։

Կերան քեռին ու Խուարզոն զուրանց հաց, կնիկ փոշմընավ, առավ զամններ, դարձավ էկավ տուն։

Քեռին ու Խուարզոն լծեցին լուծք ու քշեցին, մինչ հ'ըրկուն, հարցկեցին, տուն էկան, տարան զեղներ կապեցին ու էկան, նըստան տուն օր հաց ուտեն։ Քեռին ու Խուարզոն նստան հաց կերան։

Քեռին.—Խուարզո՛,—ըսեց թե,—էլի՛ էրթանք քնինք մըզի։

Էլան գացին հ'ընչի փողան։ Խուարզոն մտավ փեթկի տակ, պատվըտավ։ Ռեսի տղեն էկավ։

Ըսեց.—Հ'ուր ա՞. չէ դու ընձի բան կբերեր էր։

Ըսեց.—Էփեցի քզիկ ծվածեղ, հ'էլա ընկա ցորնի ըռեջքի հետ, գացի դեմ էլա մըր հ'արտ։ Կարած-պատանք Խուարզոն օր զիս տեսավ, խանչեց զիս ու առավ գնաց։ Ապա ըսեց,—Իմալ էնինք, օր լուսուն ես քզիկ բան բերիմ իդամ։ Լուսուն կէփիմ էրկու հավ, կարմրցում, բերիմ իդամ քզիկ։

Ռեսի տղեն կնկան կասա թե.—Լուսուն կլծիմ էրկու հատ բալաք եզ, կեսօր էղավ՝ կէլնիս տանիք, կալքիս, հ'ուր օր բալաք եզ տեսար, կընկնաս. էն ճամփու հետ ու կիդաս։

Խուարզոն էդ բան հասկըցավ ու էլավ գնաց ու քնավ։ Լուսուն էլավ, Խուարզոն ու քեռին լծեցին զլուծք ու գացին։ Գացին ուրենց արտ, ուրանց սերմ ցանեցին, լծեցին ու քշին։

Կեսավուր մոտըցավ։ Կնիկ էփեց էրկու հատ հավ, քիչ մ'ապուր ու հաց առավ պըտի էրթեր լըծքի։

Դառնանք Խուարզոն։ Խուարզոն ըսեց.—Քեռի՛, ես էս օր կնեդ

ջրմ էնի։ Հանա զքու շապիկ, թալ մեկ եզան, ես լէ իմ մեկ շապիկ թալիմ մեկ եզան։

Խուարզոն զէրկու եզն լէ կէնա բալաք։

Կնիկ աչքեց զէդ բալաք եզներ ու գնաց, գնաց, մոտեցավ լրծքին, ճանչցավ, օր ուրանց լուծքն էր, էմ լէ ուզեց օր ետ դառներ, Խուարզոն կանչեց.—Քեռընկի՛, արի՛, արի՛։

Հ'իշուց շալակ, դրեց գետին, ուրանք զլուծք հարձրկեցին, նստան օր պտի հաց ուտեն։ Քեռին բացեց շալակ, օր սադա կարմրրուկ հավ ա։

Կնիկ ըսեց.—Մա՛րդ, տնավեր, դու հ'ըմեն օր զատ կուտիք, ապա կանչեք ռեսի տղեն լէ, թը գա փշում ուտա։

Քեռին ըսեց.—Խուարզո, դե՛, գնա կանչա, թը գա։

Խուարզոն ըսեց.—Փըրծու ցաքի մահակ տուր ընձիկ, էրթամ խանչիմ գա։

Քեռին ըսեց.—Լառ՛, դարդակ գնա։

— Չէ՛,—ըսեց,—շներ ընձիկ կխածնին։

Էլավ առավ ցաքի պարոր ու գնաց։ Գնաց ռեսի տղի մոտ։ Ըսեց.—Ռեսի՛ տղա, կփրծուա կէրթաս՝ գնա, թե չըս փըրծու՝ պարոր մը ես իմ առեր իմ, էկեր իմ, մըկա մեկ էլ իմ քեռին կառնի կիգա, քըզիկ կզարկենք, կսպանենք։

Էլավ ռեսի տղեն, փըրծուց լուծք ու գնաց տուն։

Դարձավ Խուարզոն էկավ։

Քեռին հարցուց թե.—Հ'ո՞րի չէկավ։

Ըսեց.—Հընչ ես գացի, ինք ուր արտեն փըրձավ, գնաց տուն, էլ չեկավ։

Նստան Քեռին ու Խուարզոն հաց կերան։

Կնիկ ախ քաշեց ու առավ զամներ, ետ դարձավ, էկավ։ Քեռին ու Խուարզոն էլան լծեցին զուրենց լուծք ու քշեցին հընչի հ'իրիկուն։ Հ'իրիկուն էկան, տարան ուրանց զեզներ կապեցին, էկան նստան հաց կերան։

Քեռին ըսեց.—Խուարզո՛, էլի էրթանք քնի՛նք։

Գացին հընչի փողան։ Էմ լէ Խուարզոն գնաց փեթկի տակ պատվրտավ։ Ռեսի տղեն էկավ քեռընկան ըսեց թե.—Ես ըսօր գիշեր կիգամ դռան վըրեն։

Կնիկ ասեց թե.—Ըսօր քեռին ու Խուարզոն տուն կքնին, օր հըմալ ա, մե թել մը թալ քու բութ ու բի, թալ սողընծակին, ինչ ժամանակ, օր ես էկա քաշեցի, էլի դուս։

Ըդ խոսք ըսեցին ու գնաց։ Կնիկն էկավ պառկավ ուր տեխի մեշ, քնավ։ Խուարզոն ուր թելն հարցըկեց, կապեց ուր բութ ու գնաց քնավ։ Տեսավ կես գիշերին էղավ, մեկը թել քաշեց, էլավ Խուարզոն գնաց սողընծըկի հ'առեջ։ Ռեսի տղեն ըսեց.—Դո՛ւռ բաց, արի՛ դուս։

Խուարզոն կնկան ձենով հ'ուշիկմ' ասեց.—Քեռին ու Խուարզոն հիմաց ին։

Ապա ռեսի տղեն ըսեց.—Իմա՞լ էնինք։

Ըսեց.—Սողընծըկեն բան էնինք հրտ իրար։

Եբ օր սողընծըկեն թալեց դուս, Խուարզոն չախում' թալեց կտրեց։

Գնաց ռեսի տղեն հիվընդցավ, պիտի մեռներ։ Էլան դրացիք գացին օր տեսնեն։ Խուարզո քեռընկին էլ էլավ էփեց փլավ, օր պըտի տաներ ի տես։

Խուարզոն ըսեց թե.—Քեռընկի, ես լէ կիգամ։

— Ապա քեռընկի,—ըսեց,—մե գոգնոց մը կապա, քու մեղրի տակ, օր ընտեխ քու չոքերուն զարկիս, շատ կշըխկա, կասին՝ իդա կնիկ շատ կցավա ռեսի տղի համար։

Եբոր ըդ կնիկ գնաց ռեսի տղի մոտ, էրերաց ու լաց ու վըր չոքերուն զարկեց։

Խուարզո լէ ըսեց.—Որ էնեց, որ չէնեց, գոգնոց կապող կնիկ էնեց։

Ռեսի տղեն օր ըդ խոսք հասկըցավ, խանչեց կնիկ տարավ գնաց, ըսեց.—Ապա քու լեզուն մտու իմ բերան։ Լեզուն օր մըտուց բերան, խածեց ու կտրեց, մնաց անլեզու քեռընկի, Խուարզոն վազկավ, էկավ տուն։ Ըսեց.—Քեռի՛, դհա, արի՛ զիմ հախ տու, ես ըդ հըմլա բարիշեր ինք քու հետ, եբ օր ասեցի քու կնիկ չկրցավ զրուցիլ։ Զիմ հախ տուր։ Քեռընկի լեզու չունի։

Էկավ քեռընկին էլ պառկավ, մեռավ, նոր Խուարզոն պատմեց քեռուն, զուր գլխու գալած, թե ըդ հըմլա, ըդ հըմլա, ըդ հըմլա։

Առավ զուր հախ ու գնաց։